ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ԳՊՀ ԳՀԱՊՁԲ 02/2026» ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի նիստի

«08» հունիսի, 2026թ.

ք. Գորիս, Ավանգարդ 2

ժամը 12:00

Հանձնաժողովի նախագահ՝ Աշոտ Ֆարամազյան
Հանձնաժողովի անդամներ՝ Լուսինե Տոռոզյան, Նաիրա Ներսիսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Արմինե Շալունց

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Աշոտ Ֆարամազյանը: Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից և հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման առաջին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

Հանձնաժողովը որոշեց հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Տվյալներ ընթացակարգի շրջանակներում կատարված հարցումների, պարզաբանումների հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:
3. Տվյալներ ընթացակարգի շրջանակներում ներկայացված հայտերի բացման մասին:
4. Հանձնաժողովի որոշման մասին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Տվյալներ ընթացակարգի շրջանակներում կատարված հարցումների, պարզաբանումների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

2.1 Ընթացակարգի հրավերում փոփոխություններ չեն կատարվել:
2.2. Գնման ընթացակարգի հրավերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել:
2.3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:
2.4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ որոշումներ չեն կայացվել:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Տվյալներ ընթացակարգի շրջանակներում ներկայացված հայտերի բացման մասին

3.1. Ընդունել ի գիտություն, որ «ԳՊՀ ԳՀԱՊՁԲ 02/2026» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետ էր սահմանվել 2026 թվականի հունիսի 8-ի ժամը 12:00-ն:

3.2. Ընթացակարգի հայտերի բացման օրվա և ժամի դրությամբ ոչ մի հայտ չի ներկայացվել:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Հանձնաժողովի որոշման մասին

4.1. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ոչ մի հայտ չի ներկայացվել, Ընթացակարգը հայտարարել չկայացած՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի, 3-րդ կետի:

4.2 Հրապարակել ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

Նախագահ՝ _____ Աշոտ Ֆարամազյան

Անդամներ՝ _____ Լուսինե Տոռոզյան

_____ Նաիրա Ներսիսյան

Քարտուղար՝ _____ Արմինե Շալունց